



ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

16 ապրիլի 2025 թվականի թիվ 36-Ա

ք. Երևան

«ԲԱԳԵՏ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը (այսուհետ նաև՝ **Հանձնաժողով**), ուսումնասիրելով 2025 թվականի ապրիլի 04-ին իր նախաձեռնությամբ հարուցված թիվ 23 վարչական վարույթի նյութերը, պարզեց.

Հանձնաժողովը «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքով (այսուհետ նաև՝ **Օրենք**) վերապահված իր վերահսկողական գործառույթներն իրականացնելիս հայտնաբերել է Օրենքի պահանջի խախտում, այն է՝ ցանցային օպերատորի գործունեություն իրականացնող «ԲԱԳԵՏ» ՍՊ ընկերության (այսուհետ նաև՝ **ցանցային օպերատոր**) կողմից իր 2024 թվականի հասույթի գոյացման բացվածքը և չափի վերաբերյալ տեղեկությունը մինչև 2025 թվականի ապրիլի 01-ը Հանձնաժողով չի ներկայացվել:

Հանձնաժողովը, ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով, 2025 թվականի ապրիլի 04-ին «ԲԱԳԵՏ» ՍՊ ընկերության նկատմամբ հարուցել է թիվ 23 վարչական վարույթ:

Հանձնաժողովը հարուցված վարչական վարույթի մասին 2025 թվականի ապրիլի 04-ին ծանուցել է ցանցային օպերատորին և հայտնել, որ այս հարցի վերաբերյալ կարող է ներկայացնել իր պարզաբանումները և բացատրությունները:

Հարուցված վարչական վարույթի ընթացքում ցանցային օպերատորը 2025 թվականի ապրիլի 04-ի Հանձնաժողով մուտքագրված գրությամբ ներկայացրել է իր պարզաբանումը, որի համաձայն՝ 18.02.2025 թվականին gor0192@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեից ցանցային օպերատորը Հանձնաժողովի քարտուղարության պաշտոնական էլեկտրոնային փոստի secretariate@tvradio.am հասցեին է ուղարկել 2024 թվականի հասույթի վերաբերյալ տեղեկությունը:

Ցանցային օպերատորն իր պարզաբանմանը կից Հանձնաժողով է ներկայացրել իր 2024 թվականի հասույթի գոյացման բացվածքը և չափի վերաբերյալ տեղեկությունը և որպես ապացույց էկրանի լուսապատկերները (սքրինշոթերը)՝ թվագրված 18.02.2025թ. ժամը 10:48-ին:

Հանձնաժողովի հիմնավորումները (պարճառաբանությունը) և եզրահանգումը.

Այսպիսով, վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն ամրագրում է հետևյալը.

Համաձայն Օրենքի 1-ին հոդվածի 4-րդ մասի՝ սույն օրենքը Հայաստանի Հանրապետությունում տարածվում է տեսալսողական մեդիաձառայություն մատուցողների, օպերատորների, կարգավորող պետական մարմնի և հանրային տեսալսողական մեդիաձառայություն մատուցողի գործունեության կառավարումն ապահովող և հսկողություն իրականացնող մարմնի վրա:

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 5-րդ ենթակետերը հստակ սահմանում են.

«3) **օպերատոր՝** ցանցային կամ մուլտիպլեքս օպերատոր, որն առաջարկում է հաղորդակցային ծառայություն (ցանցեր, տեսալսողական համակարգեր, սլոթ և այլն) և պատասխանատվություն է կրում տեխնիկական ենթակառուցվածքի շահագործման միջոցով տեսալսողական ազդանշան սպառողներին հասցնելու համար.

5) **ցանցային օպերատոր՝** ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը սեփականության կամ այլ իրավունքով ունի մալուխային կամ այլ ցանց (բացառությամբ հաճախականային սահմանափակ ռեսուրս օգտագործելու դեպքերի) և ապահովում է տվյալ ենթակառուցվածքի տեխնիկական շահագործումը.»:

Օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հեռարձակողները և օպերատորները պարտավոր են յուրաքանչյուր տարի մինչև ապրիլի 1-ը կարգավորող պետական մարմին ներկայացնել նախորդող տարվա հասույթի գոյացման բացվածքը և չափի վերաբերյալ տեղեկություն:

Ուստի Օրենքով սահմանված նորմերի պահանջները պարտադիր են ոլորտում գործունեություն իրականացնող բոլոր տեսալսողական մեդիաձառայություն մատուցողների և օպերատորների համար:

Հանձնաժողովը 2025 թվականի մարտի 05-ի թիվ Ե/04/04.1/195-25 գրությամբ հեռարձակողներին և ցանցային օպերատորներին տեղեկացրել է Օրենքի վերոնշյալ դրույթի մասին և առաջարկել Օրենքով սահմանված ժամկետում Հանձնաժողով ներկայացնել 2024 թվականի հասույթի գոյացման բացվածքը և չափի վերաբերյալ տեղեկություն:

Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել են վարչական վարույթի վերաբերյալ ցանցային օպերատորի կողմից ներկայացված բացատրություններն ու պարզաբանումները, ինչպես նաև վարչական վարույթի շրջանակում ցանցային օպերատորի կողմից ներկայացված ապացույցները:

Ուսումնասիրությունից պարզ է դարձել, որ «ԲԱԳԵՏ» ՍՊ ընկերության gor0192@mail.ru էլեկտրոնային փոստից 18.02.2025 թվականին Հանձնաժողովի քարտուղարության պաշտոնական էլեկտրոնային փոստի secretariate@tvradio.am հասցեին է ուղարկվել ցանցային օպերատորի 2024 թվականի հասույթի գոյացման

բացվածքը և չափի վերաբերյալ տեղեկությունը, որի վերաբերյալ ցանցային օպերատորը որպես ապացույց ներկայացրել է իր էլեկտրոնային փոստից քաղվածքներ (սքրինշոթեր)՝ թվագրված 18.02.2025թ. ժամը 10:48-ին:

Հանձնաժողովն ամրագրում է նաև, որ Հանձնաժողովի քարտուղարությունում ցանցային օպերատորի կողմից նշված նամակների ուղարկման վերաբերյալ իրականացվել է համապատասխան ուսումնասիրություն, որի արդյունքների վերաբերյալ Հանձնաժողովի քարտուղարության պետը զեկուցագիր է ներկայացրել: Զեկուցագրի համաձայն՝ 2025 թվականի փետրվարի 18-ին Հանձնաժողովի քարտուղարության պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին՝ secretariate@tvradio.am, «ԲԱԳԵՏ» ՍՊ ընկերության կողմից նամակ չի ստացվել: Կից ներկայացվել են վերոնշյալ էլեկտրոնային փոստի՝ հիշյալ օրվան նախորդող և հաջորդող օրերի նամակագրության, ինչպես նաև աղբարկղի սքանավորված էջերը՝ 2 (երկու) թերթ:

Այսպիսով, վարչական վարույթի նյութերի ուսումնասիրության և համադրման արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է, որ Օրենքով Հեռարձակողների և օպերատորների համար պարտավորություն է սահմանված՝ յուրաքանչյուր տարի մինչև ապրիլի 01-ը Հանձնաժողով ներկայացնել նախորդող տարվա հասույթի գոյացման բացվածքը և չափի վերաբերյալ տեղեկություն:

Հանձնաժողովն արձանագրում է՝ ցանցային օպերատորը 2020 թվականի ապրիլի 21-ից հանդիսանում է Հանձնաժողովի կողմից լիցենզավորված իրավաբանական անձ (սփռման տարածքը՝ ՀՀ Կոտայքի մարզ, լիցենզիայի սերիան, համարը՝ ԿՀ N 277, գործողության ժամկետը՝ 22.04.2020թ. - 22.04.2030թ.):

Հանձնաժողովի կողմից հաշվի են առնվել ցանցային օպերատորի կողմից ներկայացված պարզաբանումներն ու փաստարկները, մասնավորապես՝ նշված վարույթի շրջանակում կարգավորող պետական մարմնի համար անհրաժեշտ տեղեկությունը՝ հասույթի գոյացման բացվածքը և չափի վերաբերյալ տեղեկությունը մինչև ապրիլի 01-ը, ավելի կոնկրետ՝ 18.02.2025 թվականին, իրենց կողմից ուղարկվել է Հանձնաժողովի քարտուղարության պաշտոնական էլեկտրոնային փոստի secretariate@tvradio.am հասցեին, սակայն տեխնիկական խնդիրների պատճառով Հանձնաժողովն այն չի ստացել:

Քննարկվող հարցի համատեքստում հատկանշական է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 10-րդ հոդվածով նախատեսված հավաստիության կանխավարկած սկզբունքի գոյությունը.

«1.Վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ անձի ներկայացրած տվյալները, տեղեկությունները համարվում են **հավաստի բոլոր դեպքերում, քանի դեռ վարչական մարմինը հակառակը չի ապացուցել:**

Արգելվում է անձանցից պահանջել իրենց ներկայացրած տվյալները, տեղեկությունները հավաստող փաստաթղթեր կամ լրացուցիչ տեղեկություններ, եթե այդ պահանջը սահմանված չէ օրենքով:

Եթե վարչական մարմինը հիմնավոր կասկածներ ունի անձանց ներկայացրած տվյալների, տեղեկությունների իսկության վերաբերյալ, ապա ինքը պարտավոր է ինքնուրույն և իր հաշվին ձեռնարկել միջոցներ՝ դրանց իսկության մեջ հավաստիանալու համար:

2. Անձինք պատասխանատվություն են կրում վարչական մարմիններին կեղծ տվյալներ, տեղեկություններ ներկայացնելու համար:»:

Վերոգրյալի առնչությամբ Հանձնաժողովը, հիմք ընդունելով վերը նշված օրենքների դրույթները, ինչպես նաև Հանձնաժողովի քարտուղարության պետի համապատասխան զեկուցագիրը՝ «ԲԱԳԵՏ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված ապացույցները համարում է հավաստի: Ավելին, Հանձնաժողովը՝ որպես վարչական մարմին, սույն հարցի քննարկման համապետություն ցանցային օպերատորի կողմից ներկայացված տվյալների, տեղեկությունների և ապացույցների իսկության վերաբերյալ հիմնավոր կասկածներ չունի:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ցանցային օպերատորը փաստացի Օրենքով նախատեսված ժամկետում՝ մինչև 2025 թվականի ապրիլի 01-ը, կարգավորող պետական մարմին է ներկայացրել իր 2024 թվականի հասույթի գոյացման բացվածքը և չափի վերաբերյալ տեղեկությունը, որը Հանձնաժողովը տեխնիկական խնդիրների պատճառով չի ստացել, ինչպես նաև հիմք ընդունելով այն փաստը, որ Հանձնաժողովը չունի հիմնավոր կասկած ցանցային օպերատորի կողմից ներկայացված տվյալների, տեղեկությունների և ապացույցների իսկության վերաբերյալ՝ ուստի վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է, որ վարչական իրավախախտման դեպքի կամ կազմի բացակայության հիմքով ցանցային օպերատորի նկատմամբ հարուցված թիվ 23 վարչական վարույթը ենթակա է կարճման:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված է՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը չի կարող սկսվել, իսկ սկսվածը ենթակա է կարճման հետևյալ հանգամանքների առկայության դեպքում՝

«1) վարչական իրավախախտման դեպքի կամ կազմի բացակայությունը:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝

1) վարչական տույժ նշանակելու մասին.

2) գործի վարույթը կարճելու մասին:

Գործի վարույթը կարճելու մասին որոշում ընդունվում է բանավոր դիտողություն հայտարարելու, նյութերը ընկերական դատարանի, ձեռնարկությունում, հիմնարկում, կազմակերպությունում և դրանց կառուցվածքային ստորաբաժանումներում ստեղծված՝ հարբեցողության դեմ պայքարի հանձնաժողովի, հասարակական կազմակերպության կամ աշխատավորական կոլեկտիվի քննությանը հանձնելու կամ դատախազին,

նախաքննության կամ հետաքննության մարմնին հանձնելու դեպքում, ինչպես նաև սույն օրենսգրքի 247 հոդվածով նախատեսված հանգամանքների առկայության դեպքում:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 1-ին հոդվածի 4-րդ մասը, 3-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 5-րդ ենթակետերը, 19-րդ հոդվածի 3-րդ մասը և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 10-րդ հոդվածով և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին կետով և 282-րդ հոդվածի դրույթներով՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «ԲԱԳԵՏ» ՍՊ ընկերության նկատմամբ հարուցված թիվ 23 վարչական վարույթը կարճել:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն «ԲԱԳԵՏ» ՍՊ ընկերությանը պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:
3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

Տ.ՀԱԿՈԲՅԱՆ

2025թ. ապրիլի 16
ք. Երևան